02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

28 (1427) • 2 օգոստոսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Հանդիպում Արարատի մարզում

Հուլիսի 31-ին ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը Արարատի մարզային վարչության ու ենթակա բաժինների անձնակազմին ներկայացրեց նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Հրաչ Խոստեղյանին:

Վալերիյ Օսիպյանը շնորհակալություն հայտնեց վարչության նախկին պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Գասպարյանին՝ նշելով, որ նրա ղեկավարությամբ ոստիկանության Արարատի մարզային վարչությունը ունեցել է բազում ձեռքբերումներ:

Արարատի մարզպետ Գարիկ Սարգսյանն իր խոսքում նշեց, որ ոստիկանության եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ կա սերտ համագործակցություն:

Ոստիկանության գնդապետ Հրաչ Խոստեղյանը հավաստիացրեց, որ ստորաբաժանման առջեւ դրված խնդիրները անձնակազմը կլուծի պատվով ու պատասխանատվությամբ:

Քննարկվեցին նաեւ ոստիկանության օպերատիվ-ծառայողական գործունեության, ոստիկանների պատրաստվածության, կարգապահության, սոցիալական վիճակի, ծառայությանը վերաբերող օրենսդրական փոփոխությունների ու բարեփոխումների մասին հարցեր:

Հարգանքի տուրք

Երեք տարի առաջ հասարակական կարգի վերականգնման եւ հանրային անվտանգության ապահովման պրոֆեսիոնալ պարտքը կատարելիս զոհվեց ոստիկանության զորքերի ծառայող, լեյտենանտ Յուրի Տեփանոսյանը:

Հուլիսի 30-ին ոստիկանության զորքերի զորամասում հոգեհանգստի կարգ կատարվեց:

Արարողությանը մասնակցում էին ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության զորքերի հրամանատար Վահե Ղազարյանը, բարձրաստիճան սպաներ, զոհված ոստիկանի հարազատները եւ ծառայակից ընկերները: Նրանք ծաղիկներ խոնարհեցին ծառայողական պարտքը կատարելիս զոհված ոստիկանների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Հարգանքի տուրքի արարողությունից հետո լեյտենանտ Յուրի Տեփանոսյանի ծառայակից ընկերներն ու հարազատները այցելեցին նրա շիրիմին:

Ոստիկանության պետը հետեւում էր ծառայությանը

Հուլիսի 28-ին՝ Վարդավառի օրը հովեկների աննախադեպ հոսք եղավ դեպի Սեւան: Օրվա առաջին կեսին Երեւան-Սեւան-Դիլիջան ճանապարհով մեկ րոպեում միջինը անցնում էր 48 մեքենա: Այդ օրը, ըստ նախնական հաշվարկների, նշված ճանապարհով երթեւեկել է շուրջ 20 հազար տրանսպորտային միջոց:

Քաղաքացիների ու ճանապարհային երթեւեկության անվտանգությունն ապահովելու նպատակով ոստիկանությունն անցել էր շուրջօրյա ուժեղացված ծառայության:

Ուժեղացված ծառայությանը ներգրավված էին ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության, տարածքային ստորաբաժանումների, ճանապարհային ոստիկանության, ոստիկանության զորքերի, պարեկապահակետային ծառայության գնդի ծառայողները:

Ոստիկանության եւ «Armenian Helicopters» կազմակերպության

համագործակցության շրջանակում ուժեղացված ծառայությանը ուղղաթիռից հետեւում էր ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-մայոր Վալերիյ Օսիպյանը:

Մինչ ծառայության մեկնարկը Վալերիյ Օսիպյանը հանդիպեց ոստիկաններին, մաղթեց բարի ծառայություն: Տոնական տրամադրությունը չմթագնելու համար ոստիկանության պետը հորդորեց անհանդուրժող լինել օրինախախտների հանդեպ, նրանց հայտնաբերել ու ենթարկել պատասխանատվության:

Արդյունքում՝ ուժեղացված ծառայության ընթացքում ճանապարհային ոստիկանները կազմեցին վարչական իրավախախտման վերաբերյալ 1091 արձանագրություն, ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածք տեղափոխվեց 84 մեքենա. 60-ի վարորդները ոչ սթափ վիճակում էին:

Սեւանի ափամերձ հատվածներում լիովին ապահովվեց հասարակական կարգը:

Ոստիկանության ուժեղացված ծառայության արդյունքում, կարող ենք փաստել, որեւէ լուրջ միջադեպ կամ պատահար տեղի չունեցավ:

Ապօրինություն հիվանդանոցում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում կոռուպցիոն բնույթի հանցագործության վերաբերյալ ԱԱԾ-ից օպերատիվ տեղեկություններ էին ստացվել:

Ոստիկանության Շիրակի մարզային վարչության եւ Մուշի բաժնի ծառայողների հետ համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում պարզվեց, որ «Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի տնօրենը 2011-2018 թթ. ընթացքում առողջապահության նախարարության հետ ամեն տարի կնքել է պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով ծառայությունների մատուցման պայմանագրեր: Որպես սանիտար եւ բուժքույր աշխատելու համար տնօրենը աշխատանքային պայմանագրեր է կնքել երկու կնոջ հետ, որպես էլեկտրիկ՝ համատեղության կարգով նաեւ բանվոր, դռնապահ եւ վարորդ աշխատանքի է ընդունել նաեւ մի տղամարդու:

Տարբեր ամիսների կանայք բացակայել են Հայաստանից, իսկ տղամարդը որպես վարորդ, դռնապահ ու բանվոր չի աշխատել: Տնօրենը համապատասխան տեղեկագրերում նրանց հաճախելիության վերաբերյալ կեղծ տվյալներ է նշել, կազմել կեղծ հաշվետվություններ, դրանք ներկայացրել է առողջապահության նախարարություն ու ֆինանսավորում ստացել՝ խաբեությամբ հափշտակելով շուրջ 2 միլիոն 640 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Առանձնապես խոշոր խարդախություն

Ոստիկանության Արարատի բաժնի համայնքային ոստիկանները տարաբնույթ միջոցառումների արդյունքում տեղեկություններ էին ստացել, որ Վեդի քաղաքում ապրող 39-ամյա մի տղամարդ, նրա կինն ու զոքանչը, հանցավոր համաձայնության գալով, մի քանի տասնյակ անձանց վստահությունը չարաշահել են ու խարդախությամբ գումար հափշտակել:

Նախնական տվյալներով՝ նրանք քաղաքացիներին հայտնել են, որ տարբեր կազմակերպությունների միջոցով Արցախի Հանրապետության քաղաքացիներին դրամական օգնություն պետք է ուղարկեն: Քաղաքացիներին առաջարկել են իրենց անունով վարկեր վերցնել, որոնք կմարվեն օգնություն ուղարկող կազմակերպությունների կողմից: Համաձայնվողներին վերցված վարկից որոշակի գումար են տվել՝ որպես շնորհակալություն: Հետագայում նրանք չեն մարել վարկերը:

Նախնական տվյալներով՝ եռյակի հանցավոր գործունեությունից տուժած անձանց հասցված վնասը գերազանցում է 30 միլիոն դրամը:

Ձեռնարկվում են միջոցառումներ դեպքերի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Խարդախությունը բացահայտվեց



Դամացանցի ծանոթուհին չարաշահել էր տղամարդու վստահությունը եւ նրանից ստացել 7000 դոլար: էջ 3

Մահվան դեմքերը

Պատմությունը վկայում է, որ մարդը բնության ստեղծած ամենավտանգավոր կենդանին է: էջ 5

Վամեղության կանխավարկած

Լուրը տարածելուց առաջ պետք է մտածել հանցագործության բացահայտմանը չխոչընդոտելու մասին: էջ 7

Օպերատիվ

Ահազանգ մարդկությանը

Չնայած հետեւողական պայքարին՝ ապօրինի թմրաշրջանառությամբ զբաղվողները չեն դադարում ամրապնդել իրենց դիրքերը:

Թմրամոլության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության վտանգներից զերծ չէ նաեւ Հայաստանը, եւ դա ահազանգ է ոչ միայն իրավապահ, այլեւ առողջապահական ու հասարակական մարմինների համար: Ամբողջ հասարակության համար: Ուրեմն նաեւ պայքարը, հետեւողական, համառ պայքարը հիմա, այսօր պետք է մղել եւ՝ ամեն օր, միշտ...

Սմբատ Սերոբյանն ու Գեւորգ Հարությունյանն ընկերներ են: Նրանց իրար կապող մի շարք պատճառներից, թերեւս, առաջնայինը «նախասիրությունն» է: Քառասուներկուամյա այս տղամարդիկ թմրամոլ են, ու երբ «կարիքը» խեղդում է, միասին են հաղթահարում՝ վերանալով իրականությունից, իրենք իրենցից...

Այդպիսի «կարիքի» մեջ էին, երբ հուլիսի 4-ին հանդիպեցին: Առավոտյան կողմ էր. Սմբատը զանգեց Գեւորգին ու հայտնեց, որ լավ չի զգում: Ընկերն ընկերոջ «ցավը» հասկացավ կես խոսքից, որովհետեւ ինքն էլ այդ պահին նույն ցավով էր տառապում: Հարցերի հարցը՝ թմրամիջոցը որտեղից ճարելը, իր վրա վերցրեց Գեւորգը:

Սմբատը շտապեց Գեւորգի տուն, իսկ վերջինս, վերցնելով նրա քսան հազար դրամը, գնաց «ապրանքի» հետեւից: Կես ժամ չանցած՝ ափիոնն ու անհիդրիդն արդեն իրենցն էին. ընկերովի պատրաստեցին թմրանյութն ու ներարկվեցին:

Որոշ ժամանակ երանության գրկում «թափառելուց» հետո «վերադարձան» իրականություն: Սմբատը հիշեց, որ ոչ միայն ինքը, այլեւ ընտանիքը, զավակը լավ զգալու կարիք ունեն, որ ինքը նաեւ նրանց հացի խնդիրը պիտի լուծի: Հիշեց ու թմրամիջոցի չօգտագործած չափաբաժինն ու ներարկիչը գրպանը դնելով՝ ճամփա ընկավ գործատեղ: Բայց ճանապարհը «կտրեցին» ոստիկանության ծառայողներն ու կասկածանքով բերման ենթարկեցին ոստիկանության Արարատի բաժին, որտեղ էլ անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց պահուստը:

Սմբատ Սերոբյանը ոչ միայն խոստովանեց, այլեւ մատնանշեց ընկերոջն ու թմրամիջոցի հայթայթման աղբյուրը:

Համագյուղացի Աշոտ Պետրոսյանը անհիշելի ժամանակներից իրենց մատակարարն էր: Ոստիկանություն հաջորդ բերման ենթարկվողը նա էր:

Նախկին դատվածությունը դեռ չմարած՝ Աշոտը վերստին քրեական օրենսգրքի տիրույթում հայտնվեց՝ խախտելով նույն՝ 266 եւ 268 հոդվածները:

Ոստիկանությունում Աշոտ Պետրոսյանը սակավախոս չէր. խոստովանեց, մանրամասնեց:

Ազգությամբ պարսիկ Հաշիմի հետ ծանոթացել էր կալանավայրում: Քանի որ երկուսի նախասիրությունն էլ նույնն էր, մտերմացել էին:

Գտավ Հաշիմին չկորցնելը Աշոտ Պետրոսյանի համար նպատակ էր, որովհետեւ թմրանյութի իրացմամբ զբաղվող Հաշիմի ծառայությունների կարիքը ազատվելուց հետո զգալու էր:

Գտավ Հաշիմին, թմրամիջոցի հետ կապված հարցերը լուծեց ու դարձավ նրա մշտական «հաճախորդը»: Իր «հաճախորդներն» էլ իրեն գտան, ու Աշոտ Պետրոսյանը, ասես կյանքում ոչինչ չէր փոխվել, լծվեց նույն գործին:

Անձնական զննությամբ Աշոտ Պետրոսյանի մոտից հայտնաբերվեց ափիոն՝ ներարկիչով եւ՝ առանց: Փորձաքննությամբ էլ հայտնաբերվեցին օրգանիզմում առկա թմրալկալոիդներ:

Փաստով քննություն է կատարվում:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Օգտակար խորհուրդներ

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից հուլիսի 30-ը հռչակվել է որպես Մարդկանց առեւտրի դեմ պայքարի համաշխարհային օր:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը ամեն տարի հուլիսի 30-ին ուղերձով դիմում է ամբողջ աշխարհին՝ կոչ անելով պայքարել ստրկության եւ մարդկանց առեւտրի դեմ: Նաեւ հարկադիր աշխատանքի հիմնախնդրին նվիրված սեմինարներ եւ գիտաժողովներ են անցկացվում:

Թրաֆիքինգ հիմնականում իրականացվում է զոհերին մարմնավաճառության, պոռնոգրաֆիայի, սեռական բնույթի այլ ծառայությունների մեջ ներգրավելու, շինարարական, գյուղատնտեսական կամ այլ բնույթի աշխատանքների, մուրացկանությամբ զբաղվելու մեջ օգտագործելու նպատակներով:

Այս տխուր իրականությունը ներկայացնելը մեկ նպատակ է հետապնդում. մեծ փողերով գայթակղվելուց եւ պատահական ծանոթներին վստահելուց առաջ պետք է ստուգել առաջարկվածն ու առաջարկողին եւ սեփական ճակատագրի

հանդեպ անփույթ չգտնվել:

Դրա համար պետք է հետեւել մի քանի պարզ խորհուրդների:

Եթե արտերկրում աշխատելու առաջարկություն, կրթություն ստանալու կամ ճամփորդելու հրավեր եք ստացել, նախեւառաջ ճշտեք գործատու կազմակերպության գործունեության ճշգրիտ հասցեն, համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիան, գործատուի կամ միջնորդի աշխատանքային կենսագրությունը:

Ձեր անձը հաստատող փաստաթղթերը մի՛ տվեք այլ անձանց, նաեւ ձեզ հետ վերցրեք դրանց պատճենները:

Անպայման ուշադրություն դարձրեք ձեզ տրամադրված վիզայի տեսակին. տուրիստական վիզան աշխատանքի իրավունք չի տալիս:

Հիշե՛ք, եթե աշխատանքն անօրինական է, ապա նորմալ աշխատավարձ չեք ստանա եւ ամբողջովին կախման մեջ կընկնեք գործատուից:

Սովորեք գոնե բացատրվել այն երկրի լեզվով, ուր մեկնում եք աշխատելու:

Մեկնելուց առաջ ձեր հարազատներին ճշգրիտ հայտնեք աշխատանքի կամ ուսման վայրը, գործատուի կամ միջնորդի տվյալները: Եվ անպայման հետներդ վերադառնալու ճանապարհածախս վերցրեք:

Այս հասարակ, բայցեւ՝ օգտակար խորհուրդներին հետեւելը շատ անախորժություններից կազատի:

Հ. Պ.

Կեղծ թղթադրամներ էր իրացնում

Հուլիսի 29-ին ոստիկանության Վայքի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ մի տղամարդ Երեւան-Մեղրի ճանապարհին գտնվող առեւտրի կետերից մեկից առեւտուր է արել՝ վճարելով կեղծ 5000 ռուբլի անվանական արժեքով թղթադրամներ:

Օպերատիվ տեղեկությունները ստանալուն պես Վայքի ոստիկանները կարճ ժամանակում հայտնաբերեցին կասկածյալին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին հայկական, ռուսական ու ամերիկյան թղթադրամներ, որոնք առգրավվեցին՝ հետագա գործողությունների համար:

Բերման ենթարկվածը տվել է խոստովանական բացատրություն: Հետագա միջոցառումներով բացահայտվել է եւս մեկ հանցադրվագ: Տղամարդը մեղր է գնել՝ վճարելով 100 դոլար անվանական արժեքով կեղծ թղթադրամ եւ ստացել 35 հազար դրամ մանրը:

Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Հետախուզվող եղբայրները հայտնաբերվեցին

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Իրանի Իսլամական Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվող օտարերկրացի եղբայրները Էջմիածին քաղաքում են:

Հուլիսի 29-ին, օպերատիվ տվյալներն իրացնելով, Էջմիածնի կենտրոնական հրապարակի մոտակայքում 39 եւ 51-ամյա տղամարդիկ հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին ոստիկանության Վաղարշապատի բաժին: Նրանցից կրտսերը Իրանի իրավապահների կողմից հետախուզվում էր կոռուպցիոն բնույթի հանցագործություն կատարելու մեղադրանքով:

Ավագ եղբայրը Հայաստանի իրավապահների կողմից հետախուզվում էր առանձնապես խոշոր չափերով խարդախության, առանձնապես խոշոր չափերով յուրացման կամ վատնման ու դիտավորությամբ գույք վնասելու կամ ոչնչացնելու մեղադրանքով: Եղբայրները տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ:

Կատարվում է նախաքննություն:

www.police.am

Տարոնի ոստիկանների բացահայտումը

Հուլիսի 27-ին ՌԴ մի քաղաքացուհի ոստիկանության Տարոնի բաժնում հաղորդում էր տվել, որ ժամը 10-ի սահմաններում անհայտ անձը, բացելով փողոցում կայանված իր «ԲՄՎ»-ի դուռը, նստելատեղի վրայից բացահայտ հափշտակել է իր ձեռքի պայուսակը եւ դիմել փախուստի, որից հետո այգում պայուսակը նետել է, իսկ 45 հազար ռուբլին եւ ավելի քան չորս հազար դոլարը տարել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ կողոպուտը կատարել է Վանաձորի բնակիչ, 32-ամյա մի տղամարդ: Նախկինում վեց անգամ դատապարտված տղամարդը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց:

Հարուցվել է քրեական գործ:

Միջադեպ վթարից հետո

Հուլիսի 26-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Ծիծեռնակաբերդի խճուղում ավտովթար է եղել, եւ վարորդներից մեկը դանակով հարձակվել է մյուսի վրա:

Մոտակայքում ծառայություն իրականացնող ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ծառայողները նկատել էին իրար բախված երեք ավտոմեքենա, որոնցից «ԲՄՎ»-ի վարորդը դանակով հարձակվել էր «Տոյոտա»-ի վարորդի վրա:

Ոստիկանները կանխել էին հետագա անցանկալի զարգացումները:

Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:

Խուլիգանություն օդանավակայանում

Հուլիսի 30-ի լուսադեմին «Զվարթնոց» օդանավակայանի տարածքում երկու տղամարդ, որոնք տաքսի են վարում, վիճել են իրար հետ, հայհոյել՝ անհանգստություն պատճառելով տարածքում գտնվող անձանց: Վեճի պատճառը ուղեւոր փոխադրելու հարցն է եղել: Միջադեպի ընթացքում նրանցից մեկը բռունցքով հարվածել է մյուսի դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողները պարզել են միջադեպի մասնակիցների ինքնությունը եւ մարմնական վնասվածք հասցնողին հայտնաբերել ու բերման ենթարկել բաժին: Նա տվել է խոստովանական բացատրություն:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Կանխվեց գողոնի վաճառքը

Հուլիսի 27-ին ոստիկանություն է զանգահարել 26-ամյա մի երիտասարդ: Նա հայտնել է, որ հուլիսի 24-ին Հանրապետության հրապարակում իր տեսախցիկը եւ օբյեկտիվը վարձակալությամբ տվել է Արաբկիրի բնակիչ, 40-ամյա մի տղամարդու, որը յուրացրել է իրեն վստահված գույքը եւ հիմա համացանցով այն վաճառում է:

Կենտրոնականի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ տղամարդը բերման է ենթարկվել եւ տվել խոստովանական բացատրություն:

Տեսախցիկը եւ օբյեկտիվը վերցվել են:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Մենք եւ մեր անչափահասները

Երեխաները գերակա արժեք են: Անմնացորդ սեր ու մշտական ուշադրություն, հոգատարություն պահանջող արժեք, նաեւ չափազանց պատասխանատու, միաժամանակ հաճելի հոգս: Մեր զավակներին սիրելով, մեր կյանքի իմաստը նրանց մեջ տեսնելով հանդերձ՝ նաեւ մի անչափ կարեւոր խնդիր ունենք. պետք է զգույշ եւ ուշադիր լինենք նրանց հետաքրքրությունների, առօրյայի, մտորումների հանդեպ, մեր ամենազբաղված պահին անգամ ժամանակ գտնենք նրանց համար: Որովհետեւ «տարիքային» արկածասիրությունը, երեւակայությունը ամեն պահ կարող են բռնել մեր երեխայի ձեռքից ու «տանել» մեր աչքի առջեւից՝ անվերահսկելի դարձնելով նրա արարքներն ու հետաքրքրությունները: Ինչ խոսք, թող ապրեն, ձեւավորվեն մեր երեխաներն ազատ, առանց բարդույթների, բայցեւայնպես, աննկատ մասնակիցը լինենք նրանց առօրյայի, կենցաղի, հետաքրքրությունների:

Երեխան ծնողի համար գերակա արժեք է, սակայն հաճախ հենց ծնողի անտարբերության, թողտվության պատճառով երեխան նաեւ բռնարարքների ու խաբեության զոհ է դառնում կամ ինքն է հանցագործություն կատարում: Անուշադրության մատնված անչափահասին միշտ էլ «տիրություն» կանի փողոցը, չափահաս հանցագործը: Օրինակները բազմաթիվ են, հետեւություն անելն է կարեւոր:

Հուլիսի 20-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Գավառի բաժին հաղորդում ստացվեց, որ ծակած-կտրած վնասվածքով իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակիչ, 16-ամյա Ս.Հ.-ն:

Մարմնական վնասվածքների վերաբերյալ պատանին բժիշկներին իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ էր հայտնել:

Ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողները ձեռնարկված միջոցառումների շնորհիվ պարզեցին դեպքի իրական հանգամանքները: Պատանուն դանակահարելու կասկածանքով ոստիկանություն բերման ենթարկվեց Սարուխան գյուղի բնակիչ, 18-ամյա մի երիտասարդ: Նրա անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց հանցագործության գործիք դանակը:

Հուլիսի 22-ին, ժամը 22-ին, հիվանդանոցից ահազանգ ստացվեց ոստիկանության Կոտայքի բաժին: Կտրած-ծակած վնասվածքներով 15-ամյա եւ 17-ամյա երկու պատանիներ էին հիվանդանոց բուժօգնության տեղափոխվել:

Կոտայքի բաժնի ոստիկանները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզեցին պատանիների հետ կատարվածի հանգամանքները: Պարզվեց, որ ուշ երեկոյան Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցում վիճաբանություն էր եղել հիվանդանոց տեղափոխված պատանիների եւ աբովյանցի մեկ այլ պատանու՝ 15-ամյա Սարգիս Հ.-ի միջեւ: Անհիմն վիճաբանության ընթացքում էլ 15-ամյա պատանին դանակահարել էր մյուս երկուսին:

Պատանին հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Կոտայքի բաժին, որտեղ խոստովանական բացատրություն տվեց՝ ներկայացնելով հանցագործության գործիք դանակը:

Հուլիսի 24-ին ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, գողության կասկածանքով բերման ենթարկեցին 16-ամյա երկու պատանու: Երրորդ 16-ամյա պատանին բացատրական աշխատանքի շնորհիվ ինքնակամ ներկայացավ:

Պարզվեց, որ փետրվարի սկզբներին նրանք, պատուհանի փականը կոտրելով, մտել էին Արարատի մարզի Ոստան գյուղում գտնվող մի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տարածք եւ գողացել էլեկտրական հորատիչ: Հենց այդ դեպքի վերաբերյալ օպերատիվ տեղեկությունն էին իրացրել Արտաշատի քրեական հետախույզները, բայց ոստիկանությունում պատանիները խոստովանեցին այլ հանցագործություն եւս:

Հունվար-փետրվար ամիսներին մի քանի անգամ ապօրինի մուտք էին գործել Արտաշատ քաղաքի Այվազովսկու փողոցում գտնվող մի ՍՊ ընկերության տարածք եւ գողացել հոսանքի կայունացնող սարք, էլեկտրական պարագաներ, պղնձե եւ ալյումինե դետալներ՝ ընկերությանը պատճառելով 600 հազար դրամի վնաս:

Մայրաքաղաքի 17-ամյա բնակիչ Արմեն Խ.-ն հուլիսի 25-ին ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկվեց Աբովյան փողոցից. պատանին հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325 հոդվածի՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր ձեռք բերելու, պահելու մեղադրանքով:

Անչափահասներին հանցավոր ճանապարհից հետ պահելու, նրանց կողմից կատարվող հանցագործությունների կանխման, նրանց նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, ընդհանրապես՝ անչափահասներին վերաբերող հիմնահարցերը մշտապես ոստիկանության ուշադրության կենտրոնում են: Ոստիկանության կողմից մշակվում եւ իրականացվում են կանխարգելիչ տարաբնույթ միջոցառումներ, ծրագրեր եւ այլն: Բայց նույնիսկ լավագույն ծրագրերը կարող են դատապարտվել անհաջողության, եթե ծնողն իր հերթին ճիշտ ու սրտացավ վերաբերմունքով չկանգնի երեխայի կողքին: Եթե ծնողն իր կարեւոր գործերից ամենակարեւորը սեփական երեխայով զբաղվելը չդարձնի:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Օպերատիվ

Խարդախությունը բացահայտվեց

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության դիմած տղամարդը, որը օտարերկրյա քաղաքացի է, հայտնեց, որ համացանցով ծանոթացել է մի կնոջ հետ: Վերջինս ասել էր, որ բնակվում է Հայաստանում:

Որոշակի վստահություն ձեռք բերելուց հետո կինը տղամարդուն հայտնել էր, որ ցանկանում է մանկական հագուստի արտադրություն եւ խանութ հիմնել, ինչի համար իրեն անհրաժեշտ է ֆինանսական աջակցություն: Միաժամանակ քննարկել էին նաեւ իրենց ամուսնության հարցը, ինչից հետո հիմնվելիք արտադրությունը պետք է միասին տնօրինեին: Այս կերպ կինը չարաշահել էր տղամարդու վստահությունը եւ նրանից ստացել 7000 դոլար: Տղամարդը փողը փոխանցել էր բանկային փոխանցման համակարգով:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները պարզել են, որ տղամարդու հետ կապ հաստատած կնոջ խնդրանքով գումարը ստացել է նրա մտերմուհին: Պարզվել է նաեւ, որ տղամարդու հետ կապ հաստատած կինը Հայաստանում չի բնակվում: Նրա մտերմուհին փողը ստանալուց հետո մի մասը վերցրել էր իրեն, իսկ մնացածը փոխանցել տղամարդու հետ կապ հաստատած կնոջը:

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները ձեռնարկում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ տղամարդու վստահությունը չարաշահած եւ խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակած կնոջ ինքնությունը պարզելու եւ միջազգային իրավապահ համագործակցության շնորհիվ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Գողացված քարտերով կանխիկացվել էր դրամ

Ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ անծանոթ մեկը գողացել է իր դրամապանակը, որի մեջ փող ու բանկային քարտեր են եղել՝ գաղտնաբառերով: Քիչ անց հնչել էր եւս մեկ ահազանգ: Այս դեպքում գրպանահատության թիրախ էր դարձել մի տղամարդ. գողացված բանկային քարտի հետ դարձյալ գաղտնաբառ կար: Որոշ ժամանակ անց տղամարդու բանկային քարտից կանխիկացվեց 100 հազար դրամ:

Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ-միջոցառումների արդյունքում հետքը գտան: Նրանց տեսադաշտում հայտնվեց Գյումրիի բնակիչ, 37-ամյա մի տղամարդ:

Նրան հայտնաբերելու միջոցառումների ընթացքում Վանաձորում բնակվող մի կնոջ պայուսակից հափշտակվեց 330 հազար դրամ: Օպերատիվ տվյալներ ստացվեցին, որ այս գողությունը եւս կատարել է գյումրեցի տղամարդը: Նա հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Բերման ենթարկվելու օրը ոստիկանությունում հնչեց եւս մեկ ահազանգ. մի տղամարդու գողացված բանկային քարտով կանխիկացվել էր 273 հազար դրամ: Գաղտնաբառը դարձյալ քարտի հետ էր եղել:

Բերման ենթարկված գյումրեցին խոստովանեց նաեւ, որ ժամեր առաջ ինքն է գողությունը կատարել:

Իրավապահները հիմնավոր տեղեկություններ ունեն, որ տղամարդը մենակ չի գործել: Փաստով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ եւ քննչական գործողություններ են իրականացվում:

Հարուցվել է քրեական գործ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Ուժեղացված ծառայություն Սյունիքում

Ոստիկանությունը շարունակում է պայքարն ապօրինի ծառահատումների դեմ: Այս շրջանակում ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի ծառայողները հուլիսի 19-ից իրականացնում են ուժեղացված ծառայություն:

Հուլիսի 20-ին ոստիկանության Կապանի բաժնի ծառայողները Սյունիք գյուղում կանգնեցրել են «ԳԱԶ-69» մակնիշի ավտոմեքենա, որը բարձված էր 1 խմ փայտանյութով: Ավտոմեքենայի 53-ամյա վարորդը հայտնել է, որ չունի համապատասխան փաստաթուղթ, իսկ փայտանյութը հատել է «Արցախ անտառի» տարածքից: Նա հրավիրվել է ոստիկանության Կապանի բաժին, իսկ ավտոմեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Նույն օրը Կապանի ոստիկանները ստուգել են «Ֆորդ Տրանզիտ» բեռնատար, որը բարձված էր 3 խմ փայտանյութով: 42-ամյա վարորդը ոստիկաններին ներկայացրել է փայտանյութի դուրսգրման եւ առաքման փաստաթուղթ ու հայտնել, որ այն տեղափոխում է Կապանի Եղվարդ բնակավայրից: Բեռնատարը տեղափոխվել է պահպանվող տարածք, իսկ վարորդը հրավիրվել է ոստիկանության Կապանի բաժին:

Հուլիսի 21-ին ոստիկանության Կապանի բաժնի պարեկապահակետային ծառայության դասակի ոստիկանները Սյունիք գյուղում ծառայության ժամանակ կանգնեցրել են փայտանյութով բեռնված «ՈՒԱԶ»: 58-ամյա վարորդը չի ունեցել պահանջվող փաստաթղթերն ու հայտնել է, որ փայտանյութը հատել է «Արցախ անտառի» տարածքում:

Հուլիսի 23-ի գիշերը ոստիկանության Սյունիքի մարզային վարչության քրեական հետախույզները ստուգման նպատակով կանգնեցրել են «ՈՒԱԶ» բեռնատար, որի մեջ փայտանյութ եւ բենզասողոց էր: 47-ամյա վարորդը չի ունեցել համապատասխան փաստաթղթեր: Նա ոստիկաններին հայտնել է, որ փայտանյութը ձեռք է բերել «Արցախանտառ» կազմակերպությունից: Ավտոմեքենան տեղափոխվել է ոստիկանության Կապանի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Նշանակվել են մասնագիտական ստուգումներ:

Դեպքերի առթիվ նյութեր են նախապատրաստվել

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Պարզաբանում՝ «օրենքի» շրջանակներում

«Վանաձոր» բժշկական կենտրոնից ոստիկանության Բազումի բաժին հաղորդում էր ստացվել, որ մարմնական վնասվածքներով բուժօգնության է դիմել վանաձորցի Արմեն Սահակյանը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվեցին դեպքի մանրամասները:

Արմենն աշխատում էր «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վանաձորի տարածքային տեղամասում: Այդ օրը անցնելով իր սպասարկած տարածքի շենքերից մեկի բակով՝ նկատեց, որ Սմբատ Հարությունյանը բացել է իր բնակարանի գազի հաշվիչի արկղը, որի իրավունքը չուներ: Արմենը մոտեցավ պարզաբանում պահանջելու: Պարզվեց՝ Սմբատը որոշ ժամանակով բացակայել էր տնից, իսկ այդ ընթացքում գազի ծառայության աշխատակիցները փակել էին գազի մուտքը՝ հնարավոր վտանգներից խուսափելու համար: Ու հիմա Սմբատը ինքնակամ միացնում էր, այնինչ դա պետք է աներ ծառայության աշխատակիցը:

Սմբատի ու Արմենի միջեւ վեճը դարձավ անխուսափելի. Սմբատը ձեռքերով, ապա պտուտակահանով խփեց Արմենին:

Սմբատ Հարությունյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 118 հոդվածով նախատեսված հանցարարք: Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գողը տեղից էր

Վանաձոր քաղաքի բնակչուհի Վարդուհի Կարապետյանը արտերկրում աշխատող որդուց 300 դոլար էր ստացել, որով պետք է մարեր վարկային պարտավորությունները: Այդ մասին տեղյակ էր նաեւ հարսը՝ Նարինեն: Վարդուհին տանը զբաղված էր թոռնիկով, իսկ այդ ընթացում Նարինեն որոշեց սկեսուրի պայուսակից դրամապանակը գողանալ: Հարմար պահը չկորցնելով՝ հանցավոր մտադրությունն իրականացրեց:

Գողոնը թաքցնելով՝ սկսեց զբաղվել առօրյա գործերով: Քիչ անց Վարդուհին պատրաստվեց խանութ գնալ, սակայն դրամապանակը չգտավ: Հասկանալով, որ գողացել են, շտապեց ոստիկանության Բազումի բաժին՝ հաղորդում տալու: Այդ ընթացքում Նարինեն հանեց 300 դոլարն ու դրամապանակը նետեց աղբամանը՝ չնկատելով, որ դրամապանակում էին նաեւ սկեսուրի բանկային եւ ամուսնու նույնականացման քարտերը:

Նարինեին թվում էր, թե սկեսուրը կմտածի՝ դրամապանակը գողացել էին տրանսպորտում: Այնինչ, եղավ հակառակը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Նարինե Խաչատրյանը խոստովանական բացատրություն տվեց: Փողը հասցրել էր ծախսել անձնական կարիքների համար, նաեւ երեխայի հետ զվարճանքի կենտրոններ էր գնացել:

Բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գողոնից ազատվեց, բայց...



Գյումրեցի Հայկազ Ղազարյանը, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեց ոստիկանության Կումայրիի բաժին: Խոստովանական բացատրություն տվեց եւ մատնացույց արեց դեպքի վայրը:

Բերման ենթարկվելուց օրեր առաջ շրջում էր բակերում, երբ նկատեց շենքերից մեկի խորդանոցի կիսաբաց դուռը: Տեսնելով, որ տարածքում մարդ չկա, որոշեց խորդանոցից գողություն անել:

Որոշումն իրականացրած՝ հեռացավ մանկական հեծանիվով եւ փոշեկուլով հանդերձ:

Գողոնը թաքցրեց հարմար մի վայրում ու սկսեց մտածել իրացնելու մասին: Գյումրու կենտրոնական շուկայում գլուխն ազատեց գողոնից, «վաստկած» չնչին գումարը գրպանը դրեց, բայց...

Գողոնից ազատվեց, իսկ պատասխանատվությունից՝ ոչ:

Հայկազ Ղազարյանը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

Խոստովանություն «մարմնի լեզվով»

Եվ, այսպես, շարունակենք ներկայացնել «մարմնի լեզուն»:

Ձեռքեր: Մարմնի երկարությամբ կախված ձեռքեր. պասիվություն, գործողության պատրաստականության բացակայություն, կամքի պակաս:

Թույլ կախված ձեռքեր. ներքին հանգստություն, հավասարակշռության վիճակ, բայց գործողության անընդհատ պատրաստականություն:

Սկզբում թուլացած ձեռքերը հանկարծ լարվում են. անկամության սկզբնական վիճակը փոխվում է գործողությունների ակտիվ պատրաստականության:

Քայլվածք: Ռիթմիկ քայլվածք. բարձր, բայց հավասարակշռված տրամադրության թուլացած ձեւ, հատուկ ուշադրության, քննադատության կամ այլ գործողության պատրաստության նշան:

Համաչափ քայլվածք. կամային գործունեություն կամ ձգտում դեպի որեւէ նպատակ, որին պետք է հասնել ուժ գործադրելով (ինչքան այդ ցանկությունը արտահայտիչ է, այնքան ավելի համաչափ է քայլվածքը:

Ռիթմի խանգարումներ (ընդհատված, սայթաքող քայլեր). վստահության բացակայություն, անհուսալիություն, շփոթմունք, ներքին ազատության պակաս:

Աչքեր: Չափազանց լայն բացված աչքեր. առաջանում է զարմանքի, հանկարծակիի գալու, մտահոգվածության, հանկարծակի ուրախության, սարսափի ժամանակ, լարված սպասումի, միամտության դեպքում եւ այլն:

Ամբողջովին բաց աչքեր. ցույց են տալիս զգացմունքների եւ բանականության բարձր ընկալունակություն, ընդհանուր աշխուժություն: Նման մարդիկ երազող են, միամիտ կամ փորձառու խաբեբա:

Կիսափակ, վարագուրված աչքեր. հոգեկան եւ դիտավորյալ չեզոքություն, բթամտություն, անտարբերություն, հետաքրքրության բացակայություն, փառասիրություն, գերակշռության զգացում: Երբեմն՝ գերհոգնածություն, ծանձրույթ:

Քննարկեցինք «մարմնի լեզվի» դրսեւորման մի քանի ձեւեր ու դրանց նշանակությունը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր դրսեւորմանը համապատասխանում է որոշակի հոգեկան վիճակ: Այդ պատճառով էլ «մարմնի լեզուն» հասկանալու համար նշանակություն ունի բոլոր արտահայտիչ գծերի սկզբունքային բազմանշանակությունը: Նույն դիմախաղը կարող է ունենալ միանգամայն տարբեր պատճառներ: «Մարմնի լեզուն» հնարավոր է հասկանալ միայն ամբողջական իրավիճակի, մարդու ընդհանուր դիրքորոշման, նրա վարքի ձեւերի ուսումնասիրության հիման վրա: «Մարմնի լեզվի» վերծանումը կարող է ինֆորմացիայի լրացուցիչ աղբյուր լինել տվյալ մարդու մասին, սակայն մարդուն եւ նրա գործողությունները հասկանալու համար անհրաժեշտ է կատարել նաեւ անձի համալիր վերլուծություն, հակառակ դեպքում «մարմնի լեզուն» թերի կլինի:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Բարոյականության հարցեր

Հունիսի 20-ին ոստիկանություն է զանգահարել 59-ամյա տղամարդ եւ հայտնել, որ մի անբարոյական կին ծեծի է ենթարկել իր կնոջն ու հարսին:

Ոստիկանները պարզել են, որ այդ օրը նրանց տուն հյուր են գնացել մի ծանոթ եւ մի անծանոթ կին: Տանտիրուհու եւ հյուրերի միջեւ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է ծագել, որի ընթացքում անծանոթը խփել է կնոջը՝ պատճառելով վնասվածքներ:

Պարզվել է անծանոթ կնոջ ինքնությունը: Մնում է պարզել բարոյականության հարցերը:

Ակնհայտ սպիտակ տենդ

Հունիսի 22-ին ոստիկանություն է զանգահարել մի կին եւ հայտնել, որ բնակարանում իրեն բռնաբարում են:

Ոստիկանները շտապ մեկնել են նշված հասցե: Պարզվել է, որ շտապելու կարիք չկար: Կինը հայտնել է, որ իր ծանոթն է փորձել իրեն բռնաբարել:

Ալկոհոլի ակնհայտ ազդեցության տակ գտնվող կինը հրաժարվել է հաղորդում տալուց, ինչպես նաեւ նարկոլոգիական կլինիկա ներկայանալուց:

Ծանոթը, որը եւս գտնվում էր նույն ակնհայտ ազդեցության տակ, կարողացել է ներկայանալ բաժին:

Դին մեքենա, հին ու ազնիվ վարորդ

Ոստիկանություն է ներկայացել 80-ամյա մի տղամարդ: Նա հայտնել է, որ վարելով «ՎԱԶ-2121» մակնիշի մեքենան՝ չի նկատել ջրաժանի հորի մոտ պառկած համագյուղացուն եւ մեքենայի անիվներով անցել է նրա ոտքի վրայով՝ պատճառելով վնասվածք:

80-ամյա տղամարդը ոստիկանություն էր եկել վիրավոր համագյուղացուն հիվանդանոց տեղափոխելուց հետո միայն:

Անառակ որդին

Քրեական հետախույզներն օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ օգտվելով ավտոտնակում գտնվող պահարանի բանալին փականում լինելու հանգամանքից՝ 35-ամյա մի տղամարդ գողացել է իր հորը պատկանող 160 հազար դրամը:

Ձեռնարկվում են միջոցառումներ որդուն հայտնաբերելու ուղղությամբ:

Անառողջ մթնոլորտ առողջարանում

Առողջարանում հանգստացող 67-ամյա մի տղամարդ հաղորդում է տվել, որ հինգ օր առաջ ցանկացել է դուրս գալ առողջարանից, սակայն դռնապահը դուռը ներսից փակել եւ մոտ երկու ժամ չի թույլատրել իրեն դուրս գալ՝ ապօրինի կերպով զրկելով ազատությունից:

Պարզվել է, որ առողջարանի տնօրենի հանձնարարությամբ անվտանգության աշխատակիցն արգելել է տղամարդուն դուրս գալ առողջարանից՝ վճարումներ չկատարելու պատճառով: Այնուհետեւ, կրկին տնօրենի հանձնարարությամբ, աշխատակիցն ուղեկցել է նրան մինչեւ բանկ՝ գումար ստանալու եւ առողջարանում վճարումներ կատարելու համար:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հուլիսի 25-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 35 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ կողոպուտի եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու, 2-ը՝ գողության, 1-ը՝ գողության եւ գողության փորձի, 1-ը՝ գողության, մարդուն առեւանգելուն եւ շորթմանը հանցակցելու, 3-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ խարդախության, յուրացնելու կամ վատնելու եւ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ վաշխառության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 1-ը՝ ինքնիրավչության, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ սուտ մատնության համար: Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 4 հետախուզվող:

Արձանագրվել է 92 ճանապարհատրանսպորտային պատահար. 7 մարդ զոհվել է, 108-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 24 դեպք. 3 մարդ զոհվել է, 23-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Հուլիսի 28-ին Երեւանի Գյուրջյան եւ Բաղյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենաներ. «Միցուբիշի»-ի 53-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Երեւանի Արշակունյաց պողոտայում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 63-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Երեւանի Գայի պողոտայի եւ Քոչարյան փողոցի խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 47-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 9-րդ կմ-ին «Իսուզու» հրշեջ ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 33-ամյա վարորդը եւ 28-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցում «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 66-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Երեւանի Մաշտոցի պողոտայում իրար են բախվել «Լեքսուս», «Հունդաի» եւ «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենաներ. «Միցուբիշի»-ի 29-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Երեւանի Արշակունյաց պողոտայի, Գր. Լուսավորչի եւ Ագաթանգեղոսի փողոցների խաչմերուկում «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 74-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 29-ին Երեւանի Մաշտոցի պողոտայում «ԿԻԱ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 30-ին Երեւանի Գայի պողոտայում «ԲՄՎ»-ի վարորդը վրաերթի է ենթարկել 24-ամյա երիտասարդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց, որտեղ գիտակցության չգալով՝ մահացել է:

■

Հունիսի 30-ին Երեւանի Դավիթ Բեկի փողոցում «ԳԱԶ-32213» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել երկու քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունիսի 30-ին Երեւանի Վարդաշենի 8-րդ փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 5-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 30-ին Էջմիածին-Մարգարա ճանապարհի 11-րդ կմ-ին իրար են բախվել «Լեքսուս» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ. «Ֆորդ»-ի 33-ամյա վարորդը եւ «Լեքսուս»-ի 29-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հուլիսի 30-ին Արտիմետ-Խորոնք ճանապարհի 1-ին կմ-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. 21-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հուլիսի 31-ին Աբովյան քաղաքի Հատիսի փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-2107» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. վարորդները եւ «Տոյոտա»-ի 22-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

Մահվան դեմքերը

Մահապատժի ներկայացվող տեսակները վկայում են, որ մարդը բնության ստեղծած ամենավտանգավոր կենդանին է, քանզի կենդանական աշխարհում նման դաժանությունը պարզապես անպատկերացնելի է:

Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին ամենասարսափելի պատժատեսակը ուժգին սառնամանիքին մերկացրած մարդու վրա սառը ջուր լցնելն էր:

Էսէռների կենտրոնական կոմիտեն այդ ժամանակներում մի հայտարարություն էր հրապարակել, թե Վորոնեժի նահանգի մի շարք գյուղերում չեկիստներն ինչպես են մարդկանց մերկացնելով, սառնամանիքին քշել փողոց ու վրաները սառը ջուր լցնելով՝ պահել մինչեւ սառցասյուներ դառնալը:

1918 թ. դեկտեմբերի 24-ին այս եղանակով սպանվեց Սոլիկամսկի եպիսկոպոս Ֆեոֆանը: Նրան մերկացրել էին, մազերը հյուսք արել, կախել ջրհորի կռունկից, իջեցրել սառցաջրի մեջ ու պահել այնքան, մինչեւ եպիսկոպոսի վրա երկու մատ սառույց էր բռնել:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին գերմանական ֆաշիստները նույն եղանակով մահապատժի էին ենթարկում գերի ընկած զինվորներին ու սպաներին: Այդպես սպանվեց, օրինակ, խորհրդային գեներալ Կարբիշեւը:

Իռլանդացիները սովորաբար զոհին դնում էին որեւէ ծանր առարկայի տակ ու ճզմում նրան:

Գաղիացիները ջարդում էին մահապարտի մեջքը, իսկ կելտերը սուրը խրում էին կողոսկրերի արանքը:

Ամերիկյան հնդկացիները զոհի միզածորանը բարակ ծղոտ էին խրում՝ մանրիկ փշերով, եւ շուռումուռ էին տալիս: Նման պատիժը կարող էր շատ երկար տեւել ու դժբախտներին անտանելի ցավ էր պատճառում: Մահապատժի այս տեսակի նկարագրություններ կան նաեւ Հին Հունաստանում:

Իրոկեզները զոհի ջղերի վերջույթները կապում էին փայտիկներին ու սկսում ոլորել: Այդ գործողության ընթացքում մարմինը ցնցվում էր, գալարվում եւ «հանդիսատեսի» աչքի առաջ տառացիորեն կտորկտոր լինում:

Ֆիլիպիններում մերկացրած մահապարտին կապում էին սյանը՝ դեմքով դեպի արեւը, որը կամաց-կամաց սպանում էր նրան: Արեւելյան այլ երկրներում պատռում էին զոհի փորը, փորոտիքը հանում, աղ լցնում խոռոչն ու մարմինը կախում շուկայի հրապարակում:

Հուրոնները մահապարտի գլխին դիակ էին կախում, այնպես, որ քայքայվող դիակից ծորացող ողջ գարշանքը լցվի նրա դեմքին:

Մարոկոյում եւ Շվեյցարիայում մահապարտին սեղմում էին երկու տախտակի արանքում ու սղոցում:

Եգիպտացիները չոր եղեգնիկներ էին խրում զոհի մարմինն ու կրակի տալիս:

Պարսիկներն այս «բնագավառում» ամենահնարամիտն էին. նրանք զոհին պառկեցնում էին նավակի մեջ, որտեղ անցքեր էին բացված գլխի, ոտքերի ու ձեռքերի համար, ու ծածկում նույնպիսի նավակով: Թշվառին, ի վերջո, ողջ-ողջ ուտում էին որդերը: Նույն պարսիկները զոհին աղում էին աղացքարով կամ մաշկազերծ էին անում կենդանի մարդուն ու մսեղիքի մեջ փշեր խրում: Հարեմի «օրինազանցների» մարմինը կտրատում էին ամենանուրբ մասերում ու հալված արծիճ կաթեցնում բաց վերքերին:

Դաժան հնարամտությամբ աչքի էին ընկնում նաեւ չինացիները: Հիշատակվում է, օրինակ, մահապատժի այսպիսի տեսակ. դատապարտյալին ձգում էին մատղաշ բամբուկի ցողունների վրա: Եվ բամբուկը մի քանի օրվա ընթացքում աճելով՝ մխրճվում էր զոհի մարմնի մեջ, նրան անտանելի տառապանքներ պատճառելով:

Չինաստանում դահիճը կարող էր կորցնել գլուխը, եթե զոհը նշանակված ժամանակից շուտ մահանար, իսկ ժամկետը կարող էր ութ կամ ինն օր լինել:

Սիամում դատապարտյալին նետում էին կատաղած ցուլերի մոտ, որոնք պոզահարելով ու ոտնատակ տալով՝ սպանում էին նրան: Այդ երկրի թագավորը մի ապստամբի ստիպել էր ուտել սեփական միսը, որը շերտ-շերտ կտրում էին նրա մարմնից: Նույն սիամցիները զոհին լիանաներից հյուսված շուրջառ էին հագցնում ու սուր առարկաներով ծակծկում նրան, այս տանջահարությունից հետո մարմինն արագ բաժանում էին երկու մասի ու վերին մասն անմիջապես դնում կաս-կարմիր պղնձե ցանցի վրա. այդ գործողությունը դադարեցնում էր արնահոսությունն ու երկարաձգում կիսատված մարդու կյանքը...

«Սեւ քարածիվ» ուղղիչ-աշխատանքային գաղութը

Ուղղիչ-աշխատանքային N 56 գաղութը, որը հայտնի է «Սեւ քարածիվ» անվամբ, տեղակայված է հեռավոր տայգայում՝ Սվերդլովի մարզի Լոզվինսկի ավանում: Բանտը կառուցվել է ժայռերի վրա, որպեսզի բանտարկյալները հնարավորություն չունենան ստորգետնուղի փորելով՝ փախչել: Առաջին դատապարտվածներն այստեղ հայտնվեցին 1935 թ., երբ կազմակերպվեց Իվդելսկյան ուղղիչ-աշխատանքային ճամբարը (Իվդելլագ): Կալանավորները հիմնականում ներգրավված էին ծառահատման աշխատանքներում, հանքերում, կառուցում էին երկաթգիծ: Ճամբարը վատ համբավ ուներ, քանի որ մեծ թվով կալանավորներ էին մահանում:

Ստուգումները ցույց տվեցին, որ Իվդելլագի ՆԳ ժողովրդական կոմիսարիատի աշխատակիցները պատկերացում չունեին ինչպես ղեկավարել ճամբարը, ինչի հետեւանքով կալանավորների համար ստեղծվել էին դժոխային պայմաններ: Նրանք բնակվում էին բարաքներում եւ վրաններում, որոնք նորմալ չէին տաքացվում, չունեին տաք հագուստ, ցածր մակարդակի վրա էր բուժսպասարկում: Այս ամենի հետեւանքով մեծանում էր մահացությունը:

Ինչպես Իվդելլագում, այնպես էլ ԳՈՒԼԱԳԻ համակարգում տրվում էր աղքատիկ պարեն, եւ միշտ չէ, որ նույնիսկ այդ աղքատիկ քանակությունը հասնում էր կալանավորներին: 1930-ական թթ. վերջերին ղեկավարությունը կարողացավ ապահովել պարենի նորմալ մատակարարումը եւ նորմալ շինությունների կառուցումը հնարավորություն տվեց կտրուկ նվազեցնել մահացությունը: Դա, սակայն, երկար չտեւեց: Հայրենական մեծ պատերազմի սկզբում կտրուկ ավելացավ Իվդելլագի կալանավորների թիվը, որոնց թվում՝ մի քանի հազար գերմանացի ռազմագերիներ: Չէր բավականացնում պարենը, նույնիսկ ուտելիքի մնացորդների համար դատապարտվածների միջեւ տեղի էին ունենում կռիվներ, որոնք երբեմն ավարտվում էին սպանություններով:

1937-1946 թթ. ընթացքում Իվդելլագում զոհվեց մոտ 30 հազար հոգի:

Շուտով Իվդելլագը դարձավ ողջ ԽՍՀՄ-ի վատ համբավ ունեցող ուղղիչ-աշխատանքային գաղութներից մեկը: Այստեղ սկսեցին բերել մահապատժի դատապարտվածներին: Նրանց գնդակահարում էին տայգայում եւ այնտեղ էլ թաղում անանուն գերեզմաններում: Իվդելլագում էին հայտնվում նաեւ «երջանիկներ», որոնց մահապատիժը փոխարինել էին 15 տարվա բանտարկությամբ: ԽՍՀՄ ղեկավար Մ. Գորբաչովի օրոք պատիժը հասցվեց 20 տարվա: 1996 թ. Ռուսաստանի Դաշնությունը հրաժարվեց մահապատժից, որը փոխարինվեց ցմահ բանտարկությամբ: Ցմահ եւ մեծ ժամկետներով դատապարտվածները գաղութում մնացին մինչեւ 2018 թ.:

Ուղղիչ-աշխատանքային գաղութն իր «Սեւ քարածիվ» անվանումը ստացել է այն բանից հետո, երբ այնտեղ հայտնվեց քարածվի քանդակը, որն իր ճանկերում պահում էր օձի գլուխ: Քանդակի հեղինակն էր Կաբարդինո-Բալկարիայի բնակիչ Խաբաս Զաքուրաեւը՝ պետավտոտեսչության նախկին աշխատակից, որը 25 տարվա բանտարկության էր դատապարտվել զոքանչի սպանության համար: Զաքուրաեւին քանդակի հարցում օգնել էր մոլագար Վլադիմիր Կրիշտոպը, որին տեղափոխել էին ցմահ դատապարտվածների մեկ այլ բանտից՝ «Սեւ դելֆինից»: Օրենբուրգի մարզում գտնվող այդ հաստատությունն իր անունը ստացել էր Կրիշտոպի հեղինակած «Սեւ դելֆին» քանդակից:

Վլադիմիր Կրիշտոպը «Սեւ քարածիվի» ամենանշանավոր կալանավորն էր: Նա ճաղերի ետեւում հայտնվել էր 1996 թ.՝ Դոնի Ռոստովի երկու քաղաքացուհիների բռնաբարության եւ սպանության համար:

Կրիշտոպը հայտնի դարձավ ոչ միայն երկու նշանավոր բանտային քանդակների ստեղծմամբ, այլեւ հիմնեց «The Euthanazer» երաժշտական խումբը եւ փորձեց մասնակցել «Կալինա Կրասնայա» բանտային մրցույթին, սակայն կազմակերպիչները տեղեկանալով, թե ինչ հանցագործության համար է դատապարտված, մերժեցին:

Կրիշտոպի բանտախցի ընկերն էր սերիական մարդասպան Անատոլի Սեդիխը: 1998-2008 թթ. նա Լիպեցկում բռնաբարել եւ սպանել էր 12 աղջիկների: Լիպեցկի իրավապահները մոլագարին հայտնաբերելու համար խոստացան պարգեւ՝ 100 հազար ռուբլի եւ ավտոմեքենա, սակայն դա որեւէ արդյունք չունեցավ: Օգնեց պատահականությունը: 2008 թ. Սեդիխի ազգականներից մեկը նրա ավտոտնակում գտնում է զոհերից մեկի բջջային հեռախոսը եւ հետաքրքրության համար միացնում: Դա հնարավորություն տվեց ոստիկաններին պարզել հեռախոսի գտնվելու վայրը, իսկ որոշ ժամանակ անց կալանել Սեդիխին:

N 56 գաղութում է գտնվում ցմահ բանտարկության դատապարտված Վլադիմիր Բելիխը: 2001 թ. Բելիխը եւ հանցակիցը Մոսկվայում իրականացնում են գործարարի պատվիրված սպանություն, որից հետո սկսում են սպանել բացառապես կանանց: Նրանց զոհերից երկուսին հաջողվում է ողջ մնալ, եւ նրանցից մեկի ցուցմունքը օգնում է ձերբակալել հանցագործներին:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Չեզոքացնել վերահաս վտանգը

Զենք-զինամթերքի ապօրինի շրջանառությունը քրեորեն պատժելի արարք է աշխարհի բազմաթիվ երկրներում: Մեր երկրի օրենսդրությամբ նույնպես պատիժ է նախատեսված ապօրինի զենք ու զինամթերք ձեռք բերելու, պահելու եւ կրելու համար:

Ապօրինի զենքի դեպքում կարծես ամեն ինչ պարզ է. ոչ մի ողջամիտ, օրինապահ քաղաքացի չի կարող վիճարկել այն առգրավելու անհրաժեշտությունը: Բայց զենքը պոտենցիալ վտանգ է, եթե նույնիսկ օրինական է: Դրա համար էլ ԻՀ տարբեր օրենքներում կան հոդվածներ, որոնք որոշակի սահմանափակումներ են նախատեսում նաեւ օրինական զենքը պահելու եւ կրելու վերաբերյալ:

Զենք պահելու եւ կրելու թույլտվություն տալիս է ոստիկանությունը:

Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար պատիժ սահմանում է քրեական օրենսգրքի 235 հոդվածը: Եթե հոդվածի 3-րդ մասով ամենախիստ պատիժն է նախատեսվում (երեքից ութ տարի ժամկետով ազատազրկում), ապա 5-րդ մասով քրեական պատասխանատվությունից ազատվում են զենք կամ զինամթերք կամովին հանձնած քաղաքացիները:

Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասով, փաստորեն, պատժից խուսափելու հնարավորություն է տրվում բոլոր նրանց, ովքեր վտանգավոր ու հանցավոր պահուստից հրաժարվելու խոհեմություն են ցուցաբերում: Իսկ այդպիսիք, բարեբախտաբար, կան:

Այդպես, օրեր առաջ Հալաբյան փողոցից Հրազդանի կիրճ տանող ճանապարհին՝ կամրջի տակ, ատրճանակ, նռնակ, նռնակի պայթուցիչներ ու այլ ռազմամթերք էր թողել մի քաղաքացի եւ զանգելով ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն՝ հայտնել էր այդ մասին:

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողների կողմից բնակչության շրջանում տարված բացատրական աշխատանքի շնորհիվ մի երիտասարդ կամավոր հանձնեց ապօրինի պահվող որսորդական հրացան, փամփուշտներ, նռնակներ եւ այլ զինամթերք՝ հայտնելով, որ դրանք պատկանել են Արցախյան ազատամարտում զոհված հորը: Նույն օրը հորը պատկանող հրացանը, բացատրական աշխատանքի շնորհիվ, ոստիկանության Մարտունու բաժին ներկայացրեց մեկ այլ քաղաքացի:

Պապի ապօրինի զենքն ու զինամթերքը նրա մահից հետո, որպես հիշատակ, իր տանն էր պահում թոռնուհին՝ չգիտակցելով, որ դա ոչ միայն քրեորեն պատժելի արարք է, այլեւ՝ վտանգավոր: Երիտասարդ կինը ստիպված էր հրաժարվել հիշատակից, երբ, իրացնելով օպերատիվ տվյալները, ոստիկանության Սեւանի բաժնի աշխատակիցները հունիսի 29-ին խուզարկությամբ նրա տնից հայտնաբերեցին ինքնաձիգն ու փամփուշտները:

Ընդհանրապես, այդ օրն առանձնահատուկ էր ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման առումով: Այդ օրը ոստիկանության տարբեր բաժիններում կամավոր հանձնման կամ առգրավման տասը դեպք գրանցվեց, որից հինգը՝ ոստիկանության ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, որոնք իրականացվում էին այլ հանցագործության բացահայտման ուղղությամբ:

Բացատրական աշխատանքների շնորհիվ մայրաքաղաքի Նոր Նորք թաղամասի մի բնակիչ ինքնաշեն հրացանն ու փամփուշտներն անձամբ տարավ ոստիկանություն՝ հայտնելով, որ զենք-զինամթերքը տարիներ առաջ թաքցրել էր իրենց նկուղում ու հետո մոռացել դրանց գոյության մասին: Հրացանն ու փամփուշտները քաղաքացին ձեռք էր բերել Արցախյան ազատամարտին մասնակցելու տարիներին:

Ազատամարտի մեկ այլ մասնակից էլ Բարձրունի գյուղի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ ձեռք բերած զենքն ու ռազմամթերքը ներկայացրեց ոստիկանության Վայքի բաժին:

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողների բացատրական աշխատանքի շնորհիվ հունիսի 29-ին մի քաղաքացի հեռախոսազանգով հայտնեց, որ Նուբարաշենի կամրջի տակ զենք է թողնում: Ոստիկանները նշված վայրում հայտնաբերեցին մի ողջ զինանոց՝ ինքնաձիգեր, հրացաններ, նռնակներ, փամփուշտներ...

Ոստիկանության Արտաշատի բաժին զանգած Դալար գյուղի մի բնակիչ էլ խորդանոցը մաքրելիս ինքնաձիգ եւ փամփուշտներ էր գտել, իսկ Գեղարքունիքի մարզի Կուտական գյուղի մի բնակիչ տան տանիքը նորոգելիս էր ինքնաձիգ եւ փամփուշտներ գտել եւ անմիջապես տարել էր ոստիկանության Վարդենիսի բաժին:

Վերջին շրջանում ապօրինի պահվող զենքի ու զինամթերքի կամավոր հանձնման դեպքերն ավելի են առգրավվածից, ինչը դրական միտում է: Նաեւ փաստում է տեղերում համայնքային ոստիկանության աշխատակիցների ձեռնարկած բացատրական աշխատանքների արդյունավետության մասին:

Իսկ նրանց համար, ովքեր համառորեն չեն գիտակցում զենք-զինամթերքն իրենց մոտ պահելու վտանգավորությունը, հիշեցնում ենք, որ ապօրինի պահուստի կամովին հանձնումը ոչ միայն ազատում է քրեական պատասխանատվությունից, այլեւ իրեն ու շրջապատին ապահովագրում վերահաս վտանգից:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Պայքար ապօրինի ծառահատման դեմ



Հանրապետության ողջ տարածքում ոստիկանությունը շարունակում է ուժեղացված ծառայությունը ապօրինի ծառահատումների դեպքեր հայտնաբերելու ուղղությամբ:

Ներկայացնենք ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողների՝ հուլիսի 18-ի աշխատանքը:

Համագործակցելով ոստիկանության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների հետ՝ ոստիկանության Իջեւանի բաժնի ծառայողները փայտամշակման մի արտադրամասում հայտնաբերեցին 11 խ/մ արկղի դետալներ, տախտակներ:

Գանձաքար գյուղի փայտի վերամշակման արտադրամասում հայտնաբերվեց 27 հատ 1 մետրից ավելի երկարության վառելափայտ, մոտ 3 խ/մ երեսաթափ, 13,5 խ/մ կողահատ տախտակ, իսկ փայտածուխի արտադրամասում հայտնաբերվեց անկանոն թափված մոտ 30 խ/մ վառելափայտ, 2 խ/մ թափուկ եւ 400 պարկ փայտածուխ: Նույն գյուղի մեկ այլ արտադրամասում հայտնաբերվեց 22 խ/մ փայտանյութ:

Գեղահովիտ գյուղի մի արտադրամասում հայտնաբերվեց 11 գերան, 22 խ/մ կողահատ տախտակ:

Նախապատրաստվում են նյութեր:

Բացահայտվեց օրեր անց

Հուլիսի 8-ին հարմարեցված բանալիով բացել էին Երեւանի Գյուլիքեխվյան փողոցի շենքերից մեկի բնակարանի դուռը եւ գողացել ոսկյա կախազարդ ու լուսանկարչական տեսախցիկ:

Հանցագործությունը «տաք հետքերով» բացահայտել չհաջողվեց:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ Նոր Նորքի բաժնի ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով վարկած առաջ քաշվեց, որ բնակարանային գողությունը հնարավոր է կատարած լինեն Երեւանի երեք բնակիչներ: Ձշտվեց նրանց ինքնությունը: Կասկածյալներից երկուսը, բնակարանային գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեցին ոստիկանություն:

Ձեռնարկվում են միջոցառումներ երրորդ կասկածյալին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է քննություն:

Մուրացիկներից փող էր շորթել

Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության ծառայողները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ էին ստացել, որ Երեւանում ապրող մի տղամարդ մուրացկանությամբ զբաղվող չորս անձից պահանջում եւ ստանում է տարբեր չափերի գումարներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվեց, որ այդ տղամարդը 2018-2019 թթ., բռնության գործադրմամբ եւ բռնություն գործադրելու սպառնալիքով, Կենտրոն վարչական շրջանում մուրացկանությամբ եւ փողոցային մանր առեւտրով զբաղվող չորս անձից վերցրել է վաստակած ողջ գումարը կամ մի մասը:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Խանութի պահեստի այցելուն

Հուլիսի 18-ին ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Կապանի Ավետիսյան փողոցում գտնվող պահեստ մարդ է մտել:

Դեպքի վայր են մեկնել օպերատիվ խմբի ոստիկանները: Ըստ տուժողի՝ անհայտ անձը բացել էր շենքի տակ գտնվող խանութի պահեստարանի դռան փականն ու ներս մտել, սակայն նկատելով խանութպանին՝ փախուստի էր դիմել:

Կատարվածը բացահայտելու ուղղությամբ քրեական հետախույզները ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Պարզվեց պահեստ մտած անձի ինքնությունը: Կապանցի 17-ամյա պատանի էր, որը բերման է ենթարկվեց բաժին:

Պատանին տվել է խոստովանական բացատրություն: Հայտնել է նաեւ, որ մոտ մեկ ամիս առաջ էլի էր մտել նույն պահեստն ու ծխախոտ գողացել: Հուլիսի 1-ին եւս փորձել էր մտնել, բայց իր կամքից անկախ հանգամանքներում մտածածն ավարտին չի հասցրել:

Կատարվում է քննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Բռնվեց գողության պահին

Հուլիսի 21-ին ոստիկանության Էրեբունի բաժնում օպերատիվ տեղեկություններ ստացվեցին, որ Դավիթ Բեկի փողոցի տներից մեկում գողություն է կատարվում:

Ահազանգով Դավիթ Բեկի փողոց մեկնած ոստիկանության օպերատիվ խումբը գողության պահին հայտնաբերեց 49-ամյա մի տղամարդու: Նա բնակարանային գողություն կատարելու կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանություն:

Պարզվեց, որ կասկածյալը, ըստ նախնական տվյալների, օգտվելով տան դուռը բաց լինելու հանգամանքից, գողություն կատարելու նպատակով մտել էր ներս, սակայն հանցագործությունը ավարտին չէր հասցրել՝ բռնվել էր ժամանած ոստիկանների կողմից:

Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Անմեղության կանխավարկած

Հանցավորության վիճակը, կոնկրետ հացագործությունները, ոստիկանության աշխատանքը միշտ գայթակղիչ են զանգվածային լրատվության միջոցների համար, եւ դա բնական է: Մարդկանց հրապուրում են սահմանային վիճակները, իսկ հանցաշխարհը միշտ սահմանային վիճակ է: Ուստի օրինաչափ է, որ ԶԼՄ-ները «թեման» «մշակում են» ամենայն եռանդով ու մանրամասնությամբ, բայց, ցավոք, ոչ միշտ՝ անհրաժեշտ խորությամբ: Դրապարակումների գերակշիռ մասում առաջին պլան են մղվում սենսացիան, գործընկեր լրատվամիջոցներին առաջկտրուկ անելու սեւեռումը, մանրուքները, որոնք գուցե եւ «ցնցող» են, բայց մթագնում են դեպքերն ու երեւույթները որպես այդպիսին:

«Աղմկահարույց»-ը այսօր լրատվամիջոցների երազանքն է: Եվ հենց իրենք էլ շատ հաճախ հարուցում են աղմուկը՝ ընթերցողի (հեռուստադիտողի, ռադիոլսողի) ուշադրությունը երեւույթին սեւեռելով, իսկ երբ հետաքրքրության ալիքն իջնում է, այլեւս չեն անդրադառնում կատարվածին. սկսվում է նոր սենսացիայի «հետապնդումը»: Իսկ ցանկացած «աղմկահարույց» կամ «սովորական» հանցագործության հետեւում իրական մարդիկ ու իրական ճակատագրեր են, իրական հանցավորներ ու զոհեր...

Խոսքը զուտ անմեղության կանխավարկածի պահպանմանը կամ այս ու այն կողմին որակումներ տալուն չի վերաբերում: Խնդիրն ավելի խորքային է:

Իրազեկված լինելը մարդու սահմանադրական իրավունքն է, իրազեկումը՝ լրատվամիջոցի պարտքը: Բայց հանրահայտ ճշմարտություն է նաեւ, որ խոսքը երկսայրի սուր է: Լուրը շնչակտուր սփռելուց առաջ պե՞տք է մտածենք, որ դրանով, օրինակ, կարող ենք խոչընդոտել հանցագործության բացահայտմանը: Այսպես ասած՝ ուրիշի կեղտոտ սպիտակեղենը հրապարակավ քրքրելուց առաջ պե՞տք է հիշենք, որ հոգեկան վնասվածք ենք պատճառում «օբյեկտին»՝ մղելով անկանխատեսելի հետեւանքների, ընդհուպ՝ սպանության ու ինքնասպանության: Որեւէ մեկի վերաբերյալ «սենսացիան» շրջանառության մեջ դնելուց առաջ պե՞տք է գոնե ենթադրենք «պայթյունի» հետեւանքները: Պե՞տք է, բայց ո՛չ մտածում ենք, ո՛չ հիշում, ո՛չ ենթադրում, որովհետեւ լրատվությունն աստիճանաբար վերածվում է մոդայիկ մարզածեւի, որտեղ գերխնդիրը առաջինը վերջնագիծ հասնելն ու «բարձր վարկանիշ» ապահովելն է:

Հարցը ոչ միայն անմեղության կանխավարկածի պահպանումն է, այլեւ մարդուն խնայելը, զոհին վերստին չզոհաբերելը, լրատվության հետեւանքների համար պատասխանատվությունից ձեռքերը պիղատոսաբար չլվանալը: Մեզ էլ են երբեմն մեղադրում, թե չենք պահպանում անմեղության կանխավարկածը՝ ներկայացնելով կասկածյալներին, նրանց տվյալները հրապարակելով եւ այլն:

Քննադատությունն անարդար է. նախ՝ հանցավորին ներկայացնելը գործնական նպատակ ունի՝ տուժողներին հայտնաբերելը, կորստի վերականգնումը, հանցագործության բացահայտման ամբողջացումը, բացի այդ՝ ներկայացվում են նրանք, ում հանցարարքը արդեն իսկ հաստատվել է նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով, անչափահասների տվյալները չեն հրապարակվում, իսկ տուժողներն ընդհանրապես «դուրս են թողնվում կադրից»: Եվ սրա հիմքում ոչ միայն օրենքի պահանջի կատարման պարտադիր լինելը, այլեւ բարոյական ու էթիկական գրված ու չգրված կանոնների պահպանումն է:

Մեր լրատվամիջոցներն այսօր ազատ եւ առանց գրաքննության են աշխատում, բայց ազատությունը նախեւառաջ պատասխանատվություն է՝ որոշում կայացնելու եւ իրագործելու պատասխանատվություն, որը պետք է գերակա լինի ցանկացած «վարկանիշային» հանգամանքի ու շարժառիթի հանդեպ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հուլիսի 26-ին ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողների օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Նոր Արմավիր գյուղի մի բնակիչ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177, 38, 182 եւ 131 հոդվածների մեղադրանքով:

◆

Հուլիսի 26-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժին բերման է ենթարկվել 32-ամյա մի քաղաքացու, որը 2017 թ. հունիսից Կենտրոնականի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325 հոդվածի մեղադրանքով:

◆

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները հուլիսի 26-ին Կիեւ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից բերման են ենթարկվել 63-ամյա մի քաղաքացու, որը 2000 թ. հոկտեմբերից Արաբկիրի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 եւ 325 հոդվածների մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները հուլիսի 26-ին Դուբայ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանակավայանի ժամանման սրահից բերման են ենթարկել Հնդկաստանի Հանրապետության մի քաղաքացու, որը ապրիլի 10-ից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի մեղադրանքով:

◆

Հուլիսի 27-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզների բացատրական աշխատանքների շնորհիվ Երեւան քաղաքի վարչություն է ներկայացել 37-ամյա Մանվել Ս.-ն, որը ոստիկանության Մասիսի բաժնի կողմից հետախուզվում է քրեական օրենսգրքի 34-177 (գողության փորձը) եւ 177 (գողությունը) հոդվածների մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Մեղրիի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հուլիսի 28-ին «Մեղրի» սահմանային անցակետի հարակից տարածքից ոստիկանության Մեղրիի բաժին բերման է ենթարկվել ԻԻՀ քաղաքացի 37-ամյա Մուհամմադ Գիլը, որը ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի (յուրացնելը կամ վատնելը) մեղադրանքով:

◆

Հուլիսի 28-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 46-ամյա Արմեն Ս.-ն, որը ապրիլի 2-ից հետախուզվում էր ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից՝ քրեական օրենսգրքի 322 հոդվածի (երեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը ռեխայի կամ հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը) մեղադրանքով:

Ապօրինի ծառահատումներ են բացահայտվել

Ոստիկանությունը հետեւողական է ապօրինի ծառահատումների դեմ պայքարում:

Հուլիսի 26-ի առավոտյան ոստիկանության Բազումի բաժնի ծառայողները Վանաձոր-Դիլիջան ճանապարհի սկզբնամասում տեղակայված անշարժ պահակետում ստուգման ենթարկեցին Իջեւանի մի 36-ամյա բնակչի տղամարդու վարած բեռնատար «Գազելը»: Ստուգման ընթացքում հայտնաբերվեց երեք խորանարդ մետրից ավելի փայտանյութ:

Վարորդը ոստիկաններին ներկայացրեց բեռի օրինականությունը հավաստող ժամկետանց փաստաթուղթ, ուստի մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք:

Դեպքի վերաբերյալ ոստիկանության Բազումի բաժնում նախապատրաստված նյութերը, տարածքային ենթակայության կարգով, փոխանցվել են Իջեւանի բաժին:

Հուլիսի 27-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողները Էջմիածնի Տերյան փողոցից բաժնի պահպանվող հատուկ տարածք են տեղափոխել 3 խմ փայտանյութով բարձված «Ձիլ» բեռնատար: Մեքենան վարած 35-ամյա տղամարդը, որը Էջմիածնի բնակիչ է, բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Դեպքի առթիվ ոստիկանության Վաղարշապատի բաժնում նախապատրաստված նյութերը, տարածքային ենթակայության կարգով, փոխանցվել են Իջեւանի բաժին:

Ապօրինի ծառահատման դեպքերի հանգամանքները պարզվում են:

Թմրաշրջանառության դեպքերը բացահայտվեցին

Շարունակվում է ոստիկանության պայքարը ապօրինի թմրաշրջանառության դեմ:

Հուլիսի 25-ին ոստիկանության Արարատի բաժնի Արարատի բաժանմունքի ծառայողները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, տեղեկություններ էին ստացել, որ Սուրենավան գյուղի բնակիչներից մեկը մշակումն արգելված բույսեր է աճեցնում:

Տեղեկությունների հիման վրա հուլիսի 26-ին 56-ամյա տղամարդուն պատկանող կիսակառույց շինության տարածքում ոստիկանության ծառայողները զննություն կատարեցին՝ հայտնաբերելով մշակված կանեփի 61 տնկի՝ ընդհանուր 16 կիլոգրամից ավելի քաշով:

Նախկինում ապօրինի թմրաշրջանառության մեղադրանքով մի քանի անգամ դատապարտված տղամարդու հայտնաձով՝ բույսերն աճեցրել էր իր օգտագործման համար:

Հուլիսի 26-ին ոստիկանության Վաղարշապատի բաժնի քրեական հետախույզները, ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ ստացած օպերատիվ տվյալներն իրացնելով, զննություն են կատարել Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում ապրող 45-ամյա մի տղամարդու հողամասում՝ հայտնաբերելով մշակումն արգելված կանեփի տնկիներ:

Տարածքում հայտնաբերվեց նաեւ մարիխուանայի նմանվող դեղնականաչավուն զանգված՝ թղթով փաթեթավորված: Պարզվեց, որ այն պատկանում է 34-ամյա մի տղամարդու: Կասկածյալը բերման ենթարկվեց ոստիկանության Վաղարշապատի բաժին:

Նշանակվել են դատաքիմիական ու դատակենսաբանական փորձաքննություններ:

Ապօրինի թմրաշրջանառության դեպքերի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Կարմրադեղին ձի / Ներսես ...
... Շեւչենկո
Ազոտ, նեոն
Ծագումնաբանություն / Դերձակ
Նորվեգ քանդակագործ / Կտավատ
Բրդե գործվածք / Նիկողայոս ...
Սամուրայի ինքնասպանություն / Պիգմեյ
Նաղարա / Ծառ
Ծաղկաման
Քաղաք, ճապոնիա
Մտրակ
Փողային նվագարան / Թռչուն
... Անջափարիծե
Մթերք / Ժամանակահատված
«Ազատ հրածիգը», օպերա
Հռետոր / Կղզի, Ինդոնեզիա
Ուսուցիչ / Լսարան
Խառնաձին / Եգիպտոս
Փետրվար, մարտ
Դինգո
Թանկ քարերի կշռաչափ
Հանքաշերտ / Մարզական ֆիրմա
Հողագործ, Հին Սպարտա
Ճանրագույն հանցանք
Դողէրոցք
Ազնվական կոչում
Ուռկան / Իտալացի նկարիչ
Ֆիջի / Կրակ / Դանակ սրելու քար
Կարծրաթեւ միջատ / Ատոմ
Հարկ, Հին Հայաստան
Ինքնուս բժիշկ
Նահատակ / Ժիլբեր ...
Սոֆի ...
«Մաուգլիի» գայլը / Քահանա
Կովկասյան հնագույն ժողովուրդ
Թերակղզի, Աֆրիկա
Գաճաճ պետություն / ... Այվազյան
Կոշտ վերնազգեստ
Հայկ. ֆուտակումբ / Գրող, Մեծ եղեռնի զոհ
Անարատ / Ջուլ-...ի օրենք / Սեն-...
...-Կուլ
Հրազենի մաս
Բուենոս Այրես
Նահանգ, ԱՄՆ / Ջութակ
Քաղաք, Ուգանդա
Բրնձի օղի / Անորակ արտադրանք
Փափագ
Ֆրանսիացի ֆիզիկոս
Վարած հող
Առեւտրի կետ / Մրրիկ
«...երը փրկեցին Հռոմը»
Գետ, ՌԴ / Քարտեզ գնդի վրա
100 գլխանի հրեշ / Եկեղեցու դպիր
... Դոլինա
Ծովային տառեխ
Կտորեղեն
Գագաթ, լանջ
«Արտաշես եւ ...»
«...ը ավազների վրա»
Երկարության միավոր
Կիսաթանկարժեք քար
Հայ աշուղ / Լատվիացի ժող. գրող
Շինանյութ
Քրեական գործի քննություն
Մոլորակ / Իտալ. քաղաք
Հայ թագավոր / Կացին
Կաբուկի
Իսահակյան, բանաստեղծուք.
Մաֆիայի բնօրրանը
Աքաղաղի գլխին
Գետ, Ալթայ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրագուշակ

02.08 - 08.08

Խոյ - Մի վախեցեք անցնել նոր գործերի: Կարող եք հաջողությունների հասնել:

Ցուլ - Շատ բան կախված կլինի ձեր արագ որոշումներ կայացնելու հմտությունից եւ գործելու ունակությունից:

Երկվորյակ - Խուսափեք կոնֆլիկտներից. այդ դեպքում կկարողանաք հասնել զգալի փոփոխությունների:

Խեցգետին - Հնարավոր են խնդիրներ այնտեղ, որտեղ չեք սպասում: Պետք է ջանքեր գործադրեք, որպեսզի կարգավորեք իրավիճակը:

Առյուծ - Պետք է դիմակայեք տհաճ մարդկանց հետ շփումներին, խճճված իրավիճակներին:

Կույս - Շաբաթվա սկիզբը կարող է տհաճ անակնկալ մատուցել: Պետք է ջանաք, որ ուղղեք սխալները:

Կշեռք - Պետք է կարեւոր որոշումներ կայացնեք՝ ունենալով նվազագույն ինֆորմացիա:

Կարիճ - Սպասվում են հաճելի անակնկալներ եւ հաջող զուգադիպություններ, նոր հնարավորություններ:

Աղեղնավոր - Շաբաթվա սկիզբը կարող է բարդ լինել: Մարդիկ, ում վրա սովոր եք հույս դնել, ոչ միշտ են ձեզ աջակցում:

Այծեղջյուր - Ստիպված եք պայքարել լուրջ մրցակիցների եւ սեփական թուլությունների դեմ:

Ջրհոս - Պետք չէ հուսալ, որ արագ կլուծեք բարդ խնդիրները: Հանգամանքները կարող են անհաջող լինել:

Ձուկ - Շաբաթը բարդ կլինի: Մի հետաձգեք գործերը, փորձեք հասնել լավագույն արդյունքների:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.a5-e1 h4:f6 2. e1:g1x

Խնդիր N2 1.b2-c3 d4:b2 2. f2-g3 h4:f2 3. g1:a3x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 01.08.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: